

**ՀՀ ֆինանսների նախարարություն**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 44/2**

**3 նոյեմբերի 2015 թ.**

Քննարկվեց «Բրենդ Լիդեր» ՀՁ ՍՊԸ 07.10.2015 թ-ի բողոքը ՀՀ ֆինանսների նախարարի 02.10.2015 թ-ի թիվ 003497 որոշման դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 31.08.2015 թ-ի թիվ 5102028 հանձնարարագրի համաձայն «Բրենդ Լիդեր» ՀՁ ՍՊԸ-ում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ հտոշոր հարկ վճարողների ՀՏ 23.09.2015 թ-ի թիվ 5102028 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 618.711 դրամ: Ակտի 1-ին կետով արձանագրված խախտումը հիմք է հանդիսացել ՀՀ ֆինանսների նախարարի 02.10.2015 թ-ի թիվ 003497 որոշման կայացման համար:

Նշվեց նաև, որ «Բրենդ Լիդեր» ՀՁ ՍՊԸ կողմից նաև հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ ՖՆ հտոշոր հարկ վճարողների ՀՏ 23.09.2015 թ-ի թիվ 5102028 ակտը վերացնելու պահանջի մասին: ՀՀ վարչական դատարանի 09.10.2015 թ-ի թիվ ՎԴ/5342/05/15 որոշման համաձայն հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի. «Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ»:

Նույն օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն. «Եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է»:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի և 70-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ «Բրենդ Լիդեր» ՀՁ ՍՊԸ 07.10.2015 թ-ի բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

«Բրենդ Լիդեր» ՀՁ ՍՊԸ 07.10.2015 թ-ի բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**